ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1

ք. Երևան «9» հոկտեմբերի 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ

աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 124 500 000 (մեկ հարյուր քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 20 750 000 (քսան միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2 N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վարչապետի աշխատակազմ	«Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1	ք.Երևան, Շիրակի 74/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<Էվոկաբանկ ՓԲԸ>>
Հ/Հ 900011022085	Հ/Հ 1660009954970100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 01849105
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«9» հոկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի նախահաշվային արժեքը միավորի համար / հազար դրամ/	Ընդհանուր նախահաշվային արժեքը /հազար դրամ/
1	Ընթացիկ նորոգման աշխատանքներ Համաձայն Հավելված 1.1 և Հավելված 1.2-ի	դրամ	1	124 881.15	124 881.15

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 74/2
Էվոկաբանկ ՓԲԸ
ՀՀ 1660009954970100
ՀՎՀՀ 01849105

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
« 9 » հոկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԱՔ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ք. Երևան Հանրապետության հրապարակ Կառավարության տուն 1
Վերանորոգման աշխատանքներ

Ամփոփ նախահաշվային հաշվարկը 124881,15 հազ. դրամ Կազմված է 2019թ. գներով

դդ հ/հ	Նախահաշվի համարը	Գլխի, օբյեկտի, աշխատանքի և ծախսերի անվանումը	Նախահաշվի արժեքը, հազար դրամ				Նախահաշվի ընդհանուր հազար դրամ
			շինարարական աշխատանքներ	մոնտաժային աշխատանքներ	սարքավորանք, հարմարանք-ներ	այլ ծախսեր	
		Գլուխ II					
	Շինարարության հիմնական օբյեկտներ						
1	Տեղ. նախ. N 2-1	Շինարարական աշխատանքներ	97 259,16				97 259,16
		Ընդամենը գլուխ II	97 259,16				97 259,16
		Գլուխ VIII					
	Ժամանակավոր շենքեր և շինություններ						
2	0,50%	Ժամանակավոր շենքեր և շինություններ	486,30				486,30
		Ընդամենը գլուխ VIII	486,30				486,30
		Ընդամենը I-VIII գլուխ	97 745,45				97 745,45
		Գլուխ IX					
		Այլ աշխատանքներ և ծախսեր					
3	0,30%	Աշխատանքների կատարում ձմեռային պայմաններում	293,24				293,24
4	0,15%	Շին. աղբի տեղափոխման ծախսեր				146,62	146,62
		Ընդամենը գլուխ IX	293,24			146,62	439,85
		Ընդամենը I-IX գլուխ	98 038,69			146,62	98 185,31

դդ հ/հ	Նախահաշվի համարը	Գլխի, օբյեկտի, աշխատանքի և ծախսերի անվանումը	Նախահաշվի արժեքը, հազար դրամ				Նախահաշվի ընդհանուր հազար դրամ
			շինարարական աշխատանքներ	մոնտաժային աշխատանքներ	սարքավորանք, հարմարանք-ներ	այլ ծախսեր	
		Ընդամենը I-IX գլուխ	98 038,69			146,62	98 185,31
7	Սահմանված նորմ 6%	Չնախատեսված ծախսեր	5 882,32				5 882,32
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ըստ հավաք նախահաշվի	103 921,01			146,62	104 067,63
8		ԱԱՀ 20%	20 784,20			29,32	20 813,53
9		ԱՄԲՈՂՋԸ՝ ըստ հավաք նախահաշվի	124 705,21			175,94	124 881,15
		Ընդամենը					124 881,15
10		Այդ թվում վերադարձվող գումարը					72,94

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 74/2
Էվոկաբանկ ՓԲԸ
ՀՀ 1660009954970100
ՀՎՀՀ 01849105

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1.2
« 9 » հոկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

Տեղային նախահաշիվ թիվ 2-1

Ք. Երևան Հանրապետության հրապարակ Կառավարության տուն 1
Վերանորոգման աշխատանքներ

Միջին աշխատավարձը *181035* *դրամ* $Գ_{տրանսպորտ}$ = *1,132*

Անցումային գործակիցները: *աշխատավարձի -* *1672,38* *մեքենաների շահագործման -* *2748,71*

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիպի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Աշխատավարձի միավորը ռուբ./հազար դրամ	Մեքեն. շահագործման միավորը ռուբ./հազար դրամ	Նյութերի արժեքը (հազար դրամ)						Աշխատավարձի միավորի արժեքը հազար դրամ	Ընդհանուրի արժեքը միավորի հաշվառ հազար դրամ	Ընդհանուրի արժեքը հազար դրամ
							Նյութերի անվանումը	Չափման միավորը	Քանակը միավորի հաշվառ	Նյութերի ընդհանուր ծախսը	Միավորի արժեքը դրամ	Նյութերի միավորի արժեքը ($Գ_{տրանսպորտ}$)			
1	5-39	Մանրահատակի հղկում	100մ2	58,28	26,30								43,98	43,98	2 563,28
					43,98										
2	14-385	Մանրահատակի լաքապատում	100մ2	58,28	7,40								12,38	99,37	5 791,27
					12,38		լաք մանրատախտակի	կգ	20,80	1212,18	3,69	87,00	87,00		
3	Е11-78	Բնական քարից հատակների հղկում	100մ2	5,03	47,70	1,30							83,35	83,35	419,23
					79,77	3,57									
4	14-385	Բնական քարից հատակների լաքապատում	100մ2	5,03	7,40								12,38	70,50	354,61
					12,38		լաք քարի	կգ	20,80	104,62	2,47	58,12	58,12		

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Աշխատավարձի միավորը ռուբ./հազար դրամ	Մեքենա. շահագործման միավորը ռուբ./հազար դրամ	Նյութերի արժեքը (հազար դրամ)						Աշխատավարձի արժեքը ամբողջ մասում դրամ	Ընդհանուրի արժեքը միավորի հաշվարկ հազար դրամ	Ընդհանուրի արժեքը ամբողջ մասում դրամ
							Նյութերի անվանումը	Չափման միավորը	Քանակը միավորի համար	Նյութերի ընդհանուր ծախսը	Միավորի արժեքը հազար դրամ	Նյութերի միավորի արժեքը ($Q_{տրանսպորտ}$)			
5	14-423 E15-665	Առաստաղի ծեփամածկապատում և ներկում	100մ2	74,87	51,40	1,20							89,26	165,87	12 417,76
					85,96	3,30	մածիկ	կգ	92,00	6887,67	0,17	17,19	76,61		
							ներկ լատեկսային	կգ	63,00	4716,56	0,833	59,42			
6	E15-664 168-7	Պատերի ծեփամածկապատում և ներկում	100մ2	183,99	39,70	1,00							69,14	143,32	26 369,37
					66,39	2,75	մածիկ	կգ	79,00	14535,05	0,17	14,76	74,18		
							ներկ լատեկսային	կգ	63,00	11591,24	0,833	59,42			
7	5-42	Շրիշակներ ապամոնտաժում	100գծ/մ	46,61	0,59	0,10							1,26	1,26	58,81
					0,99	0,27									
8	E11-273	Նոր շրիշակներ շրիշակների տեղադրում	100գծ/մ	46,61	8,10	0,20							14,10	95,29	4 441,87
					13,55	0,55	շրիշակներ	մ	101,00	4708,01	0,71	81,19	81,19		
				3,73											
9	14-423 E15-665	Փայտա դռների հին ներկի մաքրում , հղկում	մ2	2997,36	0,16	—							0,27	0,27	802,04
					0,27										
10	E15-585	Փայտա դռների յուղաներկում	100մ2	29,97	87,80	0,10							147,11	192,20	5 760,85
					146,83	0,27	մածիկ	կգ	56,00	1678,52	0,17	10,46	45,09		
							յուղաներկ	կգ	27,60	827,27	1,11	34,63			
11	7-74	Դռների կողպեքների փոխարինում	հատ	195,00	0,41	—							0,69	6,35	1 237,66
					0,69		կողպեք	հատ	1,00	195,00	5,00	5,66	5,66		
12	7-64	Դռների բռնակների փոխարինում	հատ	195,00	0,12	—							0,20	4,16	811,90
					0,20		բռնակներ	հատ	1,00	195,00	3,50	3,96	3,96		

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Աշխատավարձի միավորը դրամ/հազար դրամ	Մեքենա. շահագործման միավորը դրամ/հազար դրամ	Նյութերի արժեքը (հազար դրամ)						Աշխատավարձի միավորի արժեքը հազար դրամ	Ընդհանուրի արժեքը միավորի համար դրամ	Ընդհանուրի արժեքը բոլոր վերցրած դրամ
							Նյութերի անվանումը	Չափման միավորը	Քանակը միավորի համար	Նյութերի ընդհանուր ծախսը	Միավորի արժեքը հազար դրամ	Նյութերի միավորի արժեքը (գ.նորմանապորտ)			
13	7-71	Դռների սողնակների (шпингалет) փոխարինում	հատ	195,00	0,87								1,45	4,51	879,85
					1,45		սողնակ	հատ	1,00	195,00	2,70	3,06	3,06		
14	Е8-194	Ներքին գույքային փայտամածի տեղադրում և ապամոնտաժում	100մ2 գ.պ.	59,89	41,00	0,69							70,46	106,55	6 381,69
					68,57	1,90	երեսարկի վահաններ	մ2	5,50	329,41	3,50	21,80	36,09		
							փայտամածի դետալներ	մ3	0,01	0,48	127,78	1,16			
							փայտամածի մետաղական դետալներ	տ	0,03	1,74	400,00	13,13			
		Ֆասադ													
15	14-423	Պատշգամբների առաստաղների ծեփամածկապատում և ներկում	100մ2	1,30	51,40	1,20							89,26	156,45	203,38
					85,96	3,30	մածիկ	կգ	92,00	119,60	0,18	18,54	67,19		
							ներկ ճակատային	կգ	63,00	81,90	0,68	48,65			
16	14-213 14-227	Պատերի ծեփամածկապատում և ներկում	100մ2	30,21	27,90	0,07							46,85	71,32	2 154,52
					46,66	0,19	մածիկ	կգ	50,00	1510,40	0,18	10,08	24,47		
							ներկ ճակատային	կգ	18,64	563,08	0,68	14,39			
									16,10						
17	Е46-123	Հին փայտյա պատուհանների ապամոնտաժումով	100մ2	0,196	80,50	9,80							161,56	161,56	31,67
					134,63	26,94									
18	Е15-664 168-7	Մետաղապլաստե, բլոկով, Պատուհան , 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ , չբացվող	մ2	19,60										40,89	801,39
							Մետաղապլաստե, բլոկով, Պատուհան , 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ , չբացվող	մ2	1,00	19,60	36,11	40,89	40,89		

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակ	Աշխատակարգի միավորը դրամ/հազար դրամ	Մեքենա. շահագործման միավորը դրամ/հազար դրամ	Նյութերի արժեքը (հազար դրամ)						Աշխատակարգի միավորի արժեքը դրամ/հազար դրամ	Ընդհանուրի արժեքը միավորի վերջնական դրամ	Ընդհանուրի արժեքը դրամ/հազար դրամ
							Նյութերի անվանումը	Չափման միավորը	Քանակը միավորի համար	Նյութերի ընդհանուր ծախսը	Միավորի արժեքը հազար դրամ	Նյութերի միավորի արժեքը ($q_{նյութերինարժեքը}$)				
19	14-323 14-386	Փայտա պատուհանների հին լաքի մաքրում , հղկում. լաքապում	100մ2	2,64	57,70 96,50								96,50	183,40	484,18
							լաք	կգ	20,80	54,91	3,69	86,90	86,90		
20	E13-261	Բազալտե քարերի մակերևույթների մաքրում կվարցային ավազով	մ2	500,00	0,19 0,32	0,60 1,65							1,97	2,08	1 037,84
							կվարցային ավազ	տ	0,032	16,00	3,00	0,11	0,11		
21	E15-78	Պատուհանագոգերի իրականացում բազալտե սալերով 25-30 սմ լայնությամբ 120 գ.մ.	10մ2	3,60	39,70 66,39	1,00 2,75							69,14	75,65	272,35
							ցեմենտային շաղախ	մ3	0,25	0,90	23,00	6,51	6,51		
22	E15-78	Պատուհանագոգեր բազալտե 25-30 սմ լայնությամբ	գծ.մ.	120,00										12,45	1 494,58
							Պատուհանագոգեր բազալտե	մ	1,00	120,00	11,00	12,45	12,45		
23	շուկա	Տուֆե բիվերի վերանորոգում	գծ.մ.	163,200	0,35 0,59	0,00 0,01							0,59	0,65	106,53
							պոլիմերցեմենտային շաղախ	մ3	0,002	0,33	26,00	0,06	0,06		
24	E15-613 164-7	Փեշ ժոլոբների ներկում 90.0գ.մ.	100մ2	1,350	21,40 35,79	0,03 0,08							35,87	66,78	90,16
							ներկեր	կգ	27,30	36,86	1,00	30,91	30,91		
25	E15-613 164-7	Գազաթնաթասերի ներկում 163.0 գ.մ.	100մ2	1,630	21,40 35,79	0,03 0,08							35,87	66,78	108,85
							ներկեր	կգ	27,30	44,50	1,00	30,91	30,91		
26	E15-613 164-7	Մետաղական աստիճանների ներկում 40 սմ լայնության 54.0 գ.մ.	100մ2	0,216	21,40 35,79	0,03 0,08							35,87	66,78	14,42
							ներկեր	կգ	27,30	5,90	1,00	30,91	30,91		

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Աշխատավարձի միավորը ռուբ./հազար դրամ	Մեքեն. շահագործման միավորը ռուբ./հազար դրամ	Նյութերի արժեքը (հազար դրամ)						Աշխատավարձի միավորի արժեքը դրամ հազար դրամ	Ընդհանուրի արժեքը միավորի համար հազար դրամ	Ընդհանուրի արժեքը դրամ հազար դրամ
							Նյութերի անվանումը	Չափման միավորը	Քանակը միավորի համար	Նյութերի ընդհանուր ծախսը	Միավորի արժեքը հազար դրամ	Նյութերի միավորի արժեքը ($q_{նորմանպարտ}$)			
27	Е8-190	Գույքային փայտամածի տեղադրում և ապամոնտաժում (արտաքին)	100մ2 վ.պ	30,21	25,50	0,23							43,28	73,91	2 232,54
					42,65	0,63	երեսարկի վահաններ	մ2	3,40	102,71	3,50	13,47	30,63		
							փայտամածի դետալներ	մ3	0,01	0,27	127,78	1,30			
							փայտամածի մետաղական դետալներ	տ	0,04	1,06	400,00	15,85			
27	С310-7	Շին աղբի հավաքում և տեղափոխում մինչև 12 կմ	տ	4,22	0,40	0,85							3,01	3,01	12,68
					0,67	2,34									
		Ընդամենը													77 335,27
		Վերադիր ծախսեր	13,30%												10 285,59
		Ընդամենը													87 620,86
		Շահույթ	11,00%												9 638,29
		Ընդամենը													97 259,16
		Ընդամենը նախահաշվով													97 259,16

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀԿՀՀ 02505554

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 74/2
Էվոկաբանկ ՓԲԸ
ՀՀ 1660009954970100
ՀԿՀՀ 01849105

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 2
«9» հոկտեմբեր 2019թ. կնքված
ՀՀԿԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման գումարը /ՀՀ դրամ/	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Ընթացիկ նորոգման աշխատանքներ	124 500 000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2019 թվականի դեկտեմբերի 10-ը
ԸՆԴԱՄԵՆԸ		124 500 000		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ

ք.Երևան, Շիրակի 74/2
<<Էվոկաբանկ ՓԲԸ>>
Հ/Հ 1660009954970100
ՀՎՀՀ 01849105

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 9 » հոկտեմբերի 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/4	Ընթացիկ նորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	62 250 000	93 375 000	124 500 000	124 500 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ավետիսյան Քոնսթրաքշն» ՍՊԸ

ք.Երևան, Շիրակի 74/2
<<Էվոկաբանկ ՓԲԸ>>
Հ/Հ 1660009954970100
ՀՎՀՀ 01849105

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2019թ. կնքված
ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն